



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

1501, ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164
15 / 05 / 2019թ.

0261-4-00-01

2019թվականի մայիսի 15-ին Սևանի համայնքապետարանում տեղի ունեցավ Սևան համայնքի ավագանու թիվ 3 հերթական նիստը:

Նիստը վարում էր՝ համայնքի ղեկավար՝
քարտուղարում էր՝ աշխատակազմի
քարտուղար՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի խորհրդական՝

ՊԱՊ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Համայնքի ղեկավարի օգնական՝

ԶԱՎԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Աշխատակազմի բաժինների պետեր՝

ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԸ

ԷԴՎԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆԸ

Աշխատակազմի մասնագետներ

ԶԼՄ ներկայացուցիչներ

Համատիրությունների նախագահներ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝

Մկրտիչ Մալխասյանը
Վահե Սաղաթեյանը
Արսեն Սարգսյանը
Ռոլան Դավթյանը

ԼՍԵՑԻՆ՝

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 15.05.2019թ. ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ. ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել համայնքի ավագանու՝ 15.05.2019թ. թիվ 3 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ / ԶԵԿ՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /
2. ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ / ԶԵԿ՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /
3. ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 03.05.2016ԹՎԱԿԱՆԻ N32-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ / ԲՆԱԿԱՎԱՅՐԻ / ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ՝ ԳԱԳԱՐԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԵՐԱՌՄԱՄԲ» ՆԱԽԱԳԾԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ / ԶԵԿ՝ ԷԴՎԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ /
4. ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 18.01.2019ԹՎԱԿԱՆԻ «ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐՆ ԱՃՈՒՐԴՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N8-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ / ԶԵԿ՝ ԷԴՎԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ /
5. ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N15-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ / ԶԵԿ՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

6. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

- ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.

	Կողմ -11	Դեմ -0	Ձեռնպահ -0
1.ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ			
2.ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ			
3.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ			
4.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ			
6. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ			
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ			
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
9. ՆԱԴԱՐՅԱՆ ԱՇՈՏ			
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ			
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ			

ԼՍԵՑԻՆ՝

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ / ՁԵԿ՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

- Որոշում թիվ 21-Ա

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ի կետի 1) ենթակետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ընդունել ի գիտություն Սևան համայնքի 2019թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդագրությունը՝ համաձայն թիվ 1, 2, 3 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող պահից:

Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.

	Կողմ -11	Դեմ -0	Ձեռնպահ -0
1.ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ			
2.ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ			
3.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ			
4.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ			
6. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ			
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ			
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
9. ՆԱԴԱՐՅԱՆ ԱՇՈՏ			
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ			
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ			

ԼՍԵՑԻՆՆԵՐ

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՌԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/ ՁԵԿ՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

- Որոշում թիվ 22-Ն

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Սևան համայնքի 2019թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

1. Պետական բյուջեից համայնքի բյուջեին / ազգային նվազարանների գծով / տրամադրվող սուբվենցիա, ավելացնել 3500.6 հազ. դրամ հաստատել տարեկան 3500.6 հազ. դրամ:
2. Պետական բյուջեից համայնքի բյուջեին / ՔԿԱԳ-ի բաժնի գծով տրամադրվող / միջոցներ, ավելացնել 302.7 հազ. դրամ, հաստատել տարեկան 5852.7 հազ. դրամ:

ԾԱԽՍԵՐ

1. ՔԿԱԳ-ի գծով ծախսեր /բաժին 01, խումբ 03, դաս 1/, այդ թվում՝
 - 1.1. հոդված 4212 /էներգետիկ ծառայություններ/, ավելացնել 200.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 450.0հազ. դրամ:
 - 1.2. հոդված 4214 /կապի ծառայություններ/, ավելացնել 20.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 100.0հազ. դրամ
 - 1.3. հոդված 4221 /ներքին գործուղումներ/, ավելացնել 50.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 50.0հազ. դրամ
 - 1.4. հոդված 4261 /գրասենյակային նյութեր/, ավելացնել 32.7 հազ. դրամ, հաստատել տարեկան 372.7 հազ. դրամ
2. Կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրում /բաժին 05, խումբ 1, դաս 1, հոդված 4213/
 - 2.1 պակասեցնել 2900.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 87100.0 հազ. դրամ
 - 2.2 հոդված 4511, սուբսիդիա «ՍՀԿՍ և Բ» ՀՈԱԿ ավելացնել 2900.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 5900.0 հազ. դրամ:
3. Մշակութային միջոցառումներ /բաժին 08, խումբ 2, դաս 4, հոդված 4657/
կապիտալ սուբսիդիա Գագարինի մշակութային պալատի հիմնանորոգման համար, որպես համայնքային ներդրում, ավելացնել 1800.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 2800.0 հազ. դրամ.
 - 3.1 Նախադպրոցական կրթություն /բաժին 09, խումբ 1, դաս 1, հոդված 4511/, որից՝

- 3.2 Սուբսիդիա «Սևանի թիվ 3 «Հեքիաթ» մանկապարտեզ» ՀՈԱԿ, ավելացնել 1500.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 43000 հազ. դրամ:
4. Արտադարոցական կրթություն /բաժին 09, խումբ 5, դաս 1, հոդված 4511/, որից՝
- 4.1. Սուբսիդիա «Սևանի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ, ավելացնել 200.6 հազ. դրամ, հաստատել տարեկան 29700.6 հազ. դրամ:
5. Հաստատել համայնքի բյուջեի ճշտված թիվ 1-3 հատվածները:
6. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.

	Կողմ -11	Դեմ -0	Ձեռնպահ -0
1.ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ			
2.ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ			
3.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ			
4.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ			
6. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ			
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ			
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
9. ՆԱԴԱՐՅԱՆ ԱՇՈՏ			
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ			
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ			

ԼՍԵՑԻՆ՝

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 03.05.2016ԹՎԱԿԱՆԻ N32-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ / ԲՆԱԿԱՎԱՅՐԻ / ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ՝ ԳԱԳԱՐԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԵՐԱՌՄԱՄԲ» ՆԱԽԱԳԾԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍ-ԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ՝ ԷԴՎԱՐԴ ԴԱԶԱՐՅԱՆ /

- Որոշում թիվ 23-Ա

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48.1 հոդվածի 6-րդ կետով, 66-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, նկատի ունենալով, որ կառուցապատման նպատակով զբաղեցված հողատարածքները չեն հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածքներ և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի՝ 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.03.2016 թվականի թիվ 18՝ կառուցապատման իրավունքով զբաղեցված շենք-շինությունները նվիրաբերելու և հողատարածքը ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին եզրակացությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ավագանու՝ 03.05.2016թվականի «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի / բնակավայրի / գլխավոր հատակագծի լրամշակման՝ Գագարին բնակավայրի ներառմամբ» նախագծի պահանջներին հողատարածքների և շենք-շինությունների նշանակությունները համապատասխանեցնելու մասին» N32-Ա որոշումը:
2. Հողատարածքների նշանակությունները համապատասխանեցնել Սևան համայնքի / բնակավայրի / լրամշակված գլխավոր հատակագծին:
3. Կառուցապատման և վարձակալության իրավունքով զբաղեցված հողատարածքները, դրանցով ծանրաբեռնված շենք-շինությունները ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
4. Համաձայն ներկայացվող դիմումների՝ կառուցապատման և վարձակալության իրավունքով զբաղեցրած հողատարածքներն ուղղակի վաճառքի կարգով օտարել կառուցապատողներին և վարձակալներին՝ հողի կադաստրային արժեքը /1քմ-1242 դրամ/ վճարելու պայմանով:
5. Համաձայն ներկայացվող դիմումների՝ գոյություն ունեցող հասարակական, արդյունաբերական, բնակելի և այլ նշանակության օբյեկտների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված, ինչպես նաև հողամասերի ընդլայնումը կատարել ուղղակի վաճառքի ձևով՝ տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքը / 1քմ-1242 դրամ / վճարելու պայմանով:

6. Կառուցապատողներին նվիրաբերել իրենց կողմից և իրենց միջոցներով կառուցված շենք-շինությունները:
7. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.

	Կողմ -11	Դեմ -0	Ձեռնպահ -0
1.ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ			
2.ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ			
3.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ			
4.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ			
6. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ			
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ			
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
9. ՆԱԴԱՐՅԱՆ ԱՇՈՏ			
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ			
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ			

ԼՍԵՑԻՆ՝

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 18.01.2019ԹՎԱԿԱՆԻ «ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐՆ ԱՃՈՒՐԴՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N8-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ՝ ԷԴՎԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ /

- Որոշում թիվ 24-Ա

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, համաձայն Սևան համայնքի գլխավոր հատակագծի և կառուցապատման սխեմայի, ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Սևան համայնքի ավագանու՝ 18.01.2019թվականի N8-Ա որոշման 1-ին կետում կատարել փոփոխություններ, լրացումներ և կարդալ հետևյալ բովանդակությամբ՝

Համայնքի սեփականություն համարվող արտադրական, բնակելի և հասարակական նշանակության հողերն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու՝

- | | |
|--|----------|
| 1.1 Ցամաքաբերդ թաղամաս | - 3.0 հա |
| 1.2 Գոմաձոր թաղամաս | - 1.5 հա |
| 1.3 Գագարին գյուղ՝ բնակելի կառուցապատման | - 1.0 հա |
| 1.4 Գագարին գյուղ՝ հասարակական կառուցապատման | - 0.2 հա |
| 1.5 Սևան քաղաք՝ բնակելի կառուցապատման | - 3.0 հա |
| 1.6 Սևան քաղաք՝ հասարակական կառուցապատման | - 3.5 հա |
| 1.7 Ընդհանուր կառուցապատման | - 0.5հա |
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

- 1.ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
- 2.ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
- 3.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
- 4.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
9. ՆԱԴԱՐՅԱՆ ԱՇՈՏ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ԼՍԵՑԻՆ՝

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N15-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

- Որոշում թիվ 25-Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 40-րդ ենթակետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ավագանու՝ 2011թվականի մայիսի 23-ի N15-Ն որոշումը:
2. Հաստատել Սևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման, սպասարկման ոլորտի գործունեության կանոնները՝ համաձայն թիվ 1, թիվ 2 հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
9. ՆԱԴԱՐՅԱՆ ԱՇՈՏ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ԼՍԵՑԻՆ՝

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ
ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

- Որոշում թիվ 26-Ա

Ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից համայնքապետարան ներկայացրած դիմումները և կատարված մայր գումարների վճարումները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ներքոհիշյալ անձանց և կազմակերպությունների համար սահմանել հողի հարկի և գույքահարկի արտոնություններ հետևյալ չափերով՝

1.1. ՀՈՂԻ ՀԱՐԿ

դրամներով

Հ/Հ	Հարկատուի անուն, ազգանուն	Հողի գտնվելու հասցեն	Մայր գումար	Տույժ
1	Բաղդասար Բարսեղյան	4-րդ դպրոցի հարև.		4438
2	Արսեն Հովհաննիսյան	Կոմիտասի 1		8016
3	Իշխան Մկրտչյան	Նաիրյան 74	-	3975

1.2 ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

դրամներով

Հ/Հ	Հարկատուի անուն, ազգանուն	Գույքի հասցեն	Մայր գումար	Տույժ
1	Գարիկ Անտոնյան	Գործարանային 4/41		11634
2	Բաղդասար Բարսեղյան	Չարենցի 23 Ա		9147
3	Արսեն Հովհաննիսյան	Կոմիտասի 1		15815
4	Վաչագան Կարապետյան	Չարենցի 10		1112
5	Իշխան Մկրտչյան	Նաիրյան 74	-	8710

1.3 ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ

դրամներով

Հ/Հ	Փոխադրամիջոցի սեփականատիրոջ անուն, ազգանուն	փոխադրամիջոցի մակնիշը	փոխադրամիջոցի պետհամարանիշը	Մայր գումար	Տույժ
1	Նորայր Դավթյան	MERCEDES-BENZ E 200	11 OL 311		30264

1.4 ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ

դրամներով

Հ/Հ	Անվանում	ՀՎՀՀ	Հողի հարկ /տույժ/	Գույքահարկ /տույժ/
1	«Մորմ» ՍՊԸ	08604225		83825

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

- 1.ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
- 2.ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
- 3.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
- 4.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
9. ՆԱԴԱՐՅԱՆ ԱՇՈՏ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը համայնքի ավագանուն տեղեկացրեց, որ ՀՀ առողջապահության նախարարության, Ջինիշյան հիշատակի հիմնադրամի Սևանի Բժշկական կենտրոնի և Սևանի համայնքապետարանի միջև փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել, համաձայն որի՝ Սևանում իրականացվելու է «Սևանում հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնողական

ցերեկային խնամքի կենտրոնի ստեղծում» ծրագիրը: Ծրագրի նպատակն է բարելավել Սևանի տարածաշրջանի հաշմանդամություն և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների կյանքի որակը՝ մասնագիտացված ցերեկային խնամքի կենտրոնի ստեղծման և գործունեության, վերականգնման, կրթության ու սոցիալական հարմարվողականության համար անհրաժեշտ պայմանների ապահովման միջոցով:

Կարևորելով ծրագրի դերը և դրա արդյունավետությունը՝ վերականգնողական կենտրոնի գործունեության համար Սևանի համայնքապետարանի կողմից տրամադրվելու է տարածք, որը առաջիկայում կներկայացվի համայնքի ավագանու քննարկմանը:

Համայնքի ղեկավար Մուրադյանը ներկաներին շնորհավորեց Ընտանիքի միջազգային օրվա առթիվ, մաղթեց առողջություն, երջանկություն և բարեկեցիկ կյանք:

Համայնքի ավագանու անդամ Արթուր Մելքոնյանը հանդես էր եկել նախաձեռնությամբ, այն է՝ Սևանում գործող համատիրությունների նախագահների հաշվետվությունների ներկայացում 2018թ. և 2019թ. 1-ին եռամսյակի մասով: Մինչ նիստի օրը համատիրության նախագահները ներկայացրել էին իրենց հաշվետվությունները և մասնակցում էին նիստին:

Ինչպես նշեց համայնքի ղեկավարը, համատիրությունների մասով անելիքները քիչ չեն, պետք է առանձնակի ուշադրություն դարձնել հաշվետվողականության բաղադրիչի վրա: «Գիտենք, որ ցանկացած խնդրի դեպքում բնակիչը գալիս է համայնքապետարան, և տեղական իշխանությունն էլ ձգտում է հնարավորինս աջակցել մանավանդ հրատապ խնդիրների դեպքում: Սակայն չենք ուզում դառնալ ամեն ինչի պատասխանատուն, անհրաժեշտ է գտնել ոսկե միջինը: Կարծում եմ այս ճանապարհին էական է բացատրական, իրազեկման աշխատանքների ճիշտ կազմակերպման դերը, որը հնարավորություն կտա բնակիչ-համատիրություն համագործակցությունը դարձնել տեսանելի», - ասաց համայնքի ղեկավարը:

Համայնքի ավագանու անդամ Արթուր Մելքոնյանն էլ նկատեց, որ դժգոհությունները երկուստեք են, գործում է «չկա աշխատանք, չենք վճարում և չեն վճարում, որպեսզի աշխատենք» սկզբունքը: Այն ինչ, անհրաժեշտ է մշակել մեխանիզմներ հետագա աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար:

Համայնքի ավագանին-համատիրությունների նախագահներ քննարկումը շարունակվեց նաև նիստից հետո՝ փակ ձևաչափով:

Համատիրությունների նախագահները նշեցին այն խնդիրները և դժվարությունները, որոնց հանդիպում են աշխատանքները կազմակերպելիս: Համայնքի ավագանու անդամներն էլ ներկայացրին այն մեխանիզմները, որոնց ներդրմամբ հնարավոր է աշխատանքները դարձնել և արդյունավետ, և առարկայական:

Համատիրությունների վերաբերյալ քննարկումները լինելու են շարունակական:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ